## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԵՎ
## ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ՄԻՋԵՎ՝
## ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երկու երկրների միջև բարեկամական հարաբերությունների և տեխնիկատնտեսական համագործակցության հետագա զարգացման նպատակով Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Կառավարությունը (այսուհետ՝ Կողմեր) պայմանավորվեցին հետևյալի մասին.

**Հոդված 1**

Հայաստանի Հանրապետության Կառավարության խնդրանքով՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Կառավարությունը Հայաստանի Հանրապետության Կառավարությանը տրամադրում է հարյուր միլիոն չինական յուանի չափով անհատույց օգնություն՝ Հայաստանի Հանրային հեռուստատեսության համար հեռարձակման դահլիճի նախագծի, այդ թվում՝ փոխհամաձայնեցված այլ նախագծերի քննարկման և իրականացման համար:

Համապատասխան կոնկրետ հարցերը կնախատեսվեն Կողմերի՝ լրացուցիչ ստորագրված պայմանագրում:

**Հոդված 2**

Հայաստանի Հանրապետության Կառավարության օգտին Չինաստանի զարգացման պետական բանկը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի անունով բացում է անտոկոս և անհատույց հաշիվ

յուանով՝ «Հմ. 2018/1 օգնության հաշիվ» կրճատ անվանմամբ, անհատույց օգնության վճարումների գրանցման իր մատյաններում:

Տվյալ հաշվի միջոցներն օգտագործելիս կատարվում է հաշվապահական հաշվառում՝ Չինաստանի զարգացման պետական բանկի համապատասխան ընթացակարգերի համաձայն: Չինաստանի զարգացման պետական բանկը վերոնշյալ հաշվից միջոցների օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն (հաշվի վերաբերյալ հաշվետվություններ) կուղարկի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ: Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը ստացված տեղեկատվությունը կուղարկի Հայաստանի Հանրապետության Կառավարություն՝ հետագա հաստատման համար: Բանկերը միջոցների օգտագործման վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար կուղարկեն Կողմերին:

**Հոդված 3**

Հայկական կողմը պարտավորվում է ազատել ապրանքները և ծառայությունները հարկերից և մաքսատուրքերից, ինչպես նաև սույն Համաձայնագրի շրջանակներում իր վրա է վերցնում պարտադիր ծախսերը:

**Հոդված 4**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական հայտագրերով վերջին ծանուցումը ստանալու ամսաթվից և գործում է մինչև Կողմերի կողմից սույն Համաձայնագրից բխող բոլոր պարտավորությունների լրիվ կատարումը:

Սույն Համաձայնագիրն ստորագրված է Երևան քաղաքում 2021 թվականի նոյեմբերի 15 - ին, երկու օրինակով, յուրաքանչյուր Կողմի համար՝ մեկական օրինակ, հայերեն, չինարեն և ռուսերեն: Բոլոր տեքստերը հավասարազոր են:

| | |
|---|---|
| **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝** | **ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝** |

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2021 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Կառավարության միջև՝ տեխնիկատնտեսական համագործակցության մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարության**
**միջազգային պայմանագրերի և**
**իրավունքի վարչության պետ՝**

**Նելլի Սարոյան**